ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
ՀՎՀՀ 04446181

Հասցե՝ գ. Հայթաղ, Մ. Մաշտոցի 16
Հեռ.՝ +374(60) 88-89-99 /78/
Էլ. հասցե՝ komunal.khoy@mail.ru

<<13>> փետրվար 2025 թ.

«Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ի տնօրեն

Ռ. Առաքելյանին

ՀՎՀՀ 04440779

(Էլ.փոստ՝ Hakobarakelyan88@mail.ru)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Խոյ համայնքի <<Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային հիմնարկի և «Կրիստալ Գռուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 31.01.2025թ. կնքված թիվ ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/01.2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր կողմից ստանձնվել էր աղբահանության իրականացման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման պարտավորությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1, թիվ 4 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, օրացուցային գրաֆիկին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Համաձայն պայմանագրի և հավելվածների Կատարողը պարտավոր էր Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ձեռնարկել աղբահանության ծառայության իրականացում 2025 թվականի ընթացքում Խոյ համայնքի Արշալույս, Հայթաղ, Հովտամեջ, Դողս, Ամբերդ, Ծաղկունք, Շահումյան, Դաշտ, Այգեշատ /համապատասխանաբար 1,4,5,7,8,9,10,11,14 չափաբաժիններ/ բնակավայրերում պայմանագրին կից օրացուցային գրաֆիկով:

Պայմանագրի համաձայն՝ Ծառայության մատուցման ժամկետը սահմանվել է տվյալ տարվա (2025 թ.) դեկտեմբերի 25-ը (այսուհետ՝ ավարտի օրը):

Պայմանագրի համաձայն՝ աղբահանություն է իրականացվում Խոյ համայնքի Արշալույս, Հայթաղ, Հովտամեջ, Դողս, Ամբերդ, Ծաղկունք, Շահումյան, Դաշտ, Այգեշատ բնակավայրերում աղբի տարհանում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից: Աղբահանությունն իրականացնել հետևյալ կերպ. նախապես բնակչի կողմից պարկում հավաքած աղբը տեղափոխել աղբատար մեքենա: Կուտակված աղբն աղբատարով տեղափոխել աղբավայր, որը գտնվում է Խոյ համայնքի Աղավնատուն բնակավայրում:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Կատարողի կողմից թույլ են տրվել հետևյալ էական խախտումները.

ա. Հավելված 1 կետում նշված դրույթները, այն է՝ Խոյ համայնքի Արշալույս, Հայթաղ, Հովտամեջ, Դողս, Ամբերդ, Ծաղկունք, Շահումյան, Դաշտ, Այգեշատ բնակավայրերի որոշ փողոցներից, տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից նախապես բնակչի կողմից պարկում հավաքած աղբը չի տեղափոխել աղբատար մեքենա:

բ. խախտվել են Հավելված 4-ով նախատեսված գրաֆիկները /շաբաթվա օրերը և ժամերը/:

գ. առկա է բնակիչների կողմից բողոքի ալիք /բնակիչը վճարում է աղբահանության վճար և պահանջում է աղբահանության ծառայությունը պատշաճ որակով/:

դ. քանի որ աղբահանությունը համայնքի առաջնային խնդիրներից է, այն պիտի կատարվի պատշաճ որակով, առաջացրել է բնակիչների բողոքի ալիք, կենցաղային աղբի՝ ժամանակին աղբավայր չտեղափոխելը ի հայտ է բերում ոչ սանիտարահիգենիկ իրավիճակներ, ինչը կարող է նաև նպաստել որոշակի հիվանդությունների առաջացմանը:

Կատարողին ծանուցվել է 2 անգամ էլ փոստի միջոցով, ինչին ոչ մի արձագանք չի տրվել /Ծանուցում 1-07.02.2025թ., Ծանուցում 2-10.02.2025թ./:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ Խոյ համայնքի <<Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային հիմնարկը միակողմանի լուծում է Խոյ համայնքի <<Կոմունալ սպասարկում և բարեկարգում>> համայնքային հիմնարկի և «Կրիստալ Գռուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 31.01.2025թ. կնքված թիվ ԱՄԽՀԿՍԲՀՀ-ԳՀԾՁԲ-25/01.2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կարգի կազմակերպման>> Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով **«Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ին** տրվում է 10 /տասը/ օրացույցային օր տուժանքով սահմանված Պայմանագրի /3413000 երեք միլիոն չորս հարյուր տասներեք հազար/ և Որակավորման /5119500 հինգ միլիոն մեկ հարյուր տասնինը հազար հինգ հարյուր ՀՀ դրամ/ ապահովման գումարները փոխանցել Տուժանքի մասին պայմանագրում նշված հաշվեհամարին:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն **«Կրիստալ Գռուպ» ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն ներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով ներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Հիմնարկի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**